ԱՌՈՒՎԱՃԱՌՔԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ք. Գյումրի 11.07.2016թ.

«Բարսիս» ՍՊԸ-ն՝ հետագայում «Վաճառող», ի դեմս ընկերության տնօրեն Աղվան Խաչատրյանի, որը գործում է ըստ կանոնադրության, մի կողմից, և «Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ը, հետագայում «Գնորդ», ի դեմս տնօրեն Քնարիկ Ահարոնյանի, որը գործում է ըստ կանոնադրության, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

Պայմանագրի առարկան

Վաճառողը վաճառում է, իսկ Գնորդը գնում է Շինանյութ 92514 /ինսուներկու հազար հինգ հարյուր տասնչորս/ դրամ արժողության:

1. Կողմերի պարտավորությունները և պատասխանատվությունը

2.1. Կողմերը պարտավորվում են ստուգել ապրանքների որակը՝ օրենքով, այլ իրավական ակտերով, պետական ստանդարտների պահանջներով սահմանված կարգով, իսկ եթե ապրանքների որակի ստուգման կարգը դրանցով սահմանված չէ, ապա համաձայն գործարար շրջանների սովորույթներով կամ սովորաբար կիրառվող այլ պայմաններով:

2.2. Վաճառողը պարտավորվում է ապրանքները Գնորդին հանձնել հետևյալ ժամկետում 2016թ.-ի հուլիսի 12-ից մինչև 2016թ.-ի օգոստոսի 4-ը ըստ Գնորդի պահանջարկի, տեղեկացնելով Գնորդին ապրանքների փոխանցմանը պատրաստ լինելու մասին.

2.3. Գնորդը պարտավորվում է՝

ա/ հայտնել վաճառողին սույն պայմանագրի՝ ապրանքների քանակությանը, տեսականուն, որակին ամբողջականությանը, տարային վերաբերվող պայմանների խախտման մասին՝ սահմանված ժամկետում:

բ/ ընդունել ապրանքները սույն պայմանագրով սահմանված կարգով.

գ/ վճարել ապրանքների համար՝ սահմանված ժամկետում:

3. Ապրանքների համար վճարումը իրականացվում է հետևյալ ժամկետներում 2016թ.-ի հուլիսի 12-ից մինչև 2016թ.-ի հուլիսի 20-ը ամբողջ գումարը:

4. Կողմերի միջև այն հարաբերությունները, որոնք չեն կարգավորվում սույն պայմանագրով, կանոնակարգվում են ՀՀ գործող օրենսդրությամբ:

5. Սույն պայմանագրից բխող վեճերը լուծվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6. Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում ստորագրելու պահից:

7. Սույն պայմանագիրը կազմված է երկու օրինակից, որոնք ունեն միևնույն իրավաբանական ուժը:

Վաճառող՝	Գնորդ՝
«Բարսիս» ՍՊԸ	«Գյուրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ
ք. Երևան Արշակունյաց 57/2	ք. Գյումրի, «Անի» թաղ. 11փ. 5/2
ՀՎՀՀ 02230504	ՀՎՀՀ 05536355
Հ/Հ 217001172089002	Հ/Հ 1810004776280100
«Էյչ Էս Բի Սի բանկ» Հայաստան ՓԲԸ	«Զարգացման Հայկական բանկ» ԲԲԸ
Ա. Խաչատրյան	Ք. Ահարոնյան